

891.99

4-24

7764

7765

7766

7767

7768

7769

XV 1/2 9

10,546. 9/11
10,546. 1/1.

891.71-3

4-83 8

ՄԵՆԱՔԵՄ ԳԱՄԱՂԱՑՈՒ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

(ՎԼ. ԿՈՐԵՆՆԻՈՅԵՑ)

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.

Ի ՏՊԱՐԱՆԻ Ի. Ն. ՍԿՐԻՊՈՒՌՈՎ.

1888

1004
15134 8

2056

Дозволено цензурою. С.-Петербургъ, 16 марта 1888 года.

Типографія И. Н. Скороходова (Надеждинская, № 39).

ՄԵՆԱՔԷՄ ԳԱՄԱՂԱՅՈՒ

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ւ Ի Ն Ը

Ա.

Այն միջոցին Հռոմը զօրացաւ, և իւր իշխանութիւնը տարածեց աշխարհի մի ծայրից մինչև միւսը:

Որովհետև Աւրոպայում, Հռովմայեցիք յաղթեցին Գալլերին, ամրակազմ Գերմանացիներին, Բրիտանացիներին, որոնք բացի ծովից չըջապատուած են նոյնպէս պարսպով, և լեռնային Իսպանիան, որ ներփակուած է ծովերով: Նոյնպէս Յունաստանն ու Պոնտոսի շրջակայքն ապրող շատ ազգեր հպատակեցան Հռովմայ արծիւին: Ափրիկայում՝ Հերբուլէսի սիւներից մինչև Սև ծովը, Վարթագէնն և

*

բազմաթիւ Եթովպացիք ենթարկուելով զէնքի զօրութեան պարտաւորուեցան պատրաստել պաշարներ, որոնցով ութ ամիս շարունակ կերակրվումէին Հռովմայեցիները: Բայց սրանից նրանք վճարումէին ամեն տեսակ տուրքեր և տէտք եղած ժամանակ լցուցանում Հռովմական պետութեան պիտոյքը: Ասիայում յիսուհ քաղաք Հպատակեցան Հռովմայ մի պետին, ոչ թէ ստիպուած բազմաթիւ զօրքից, այլ Եկատրեան ճիպոտներից, որոնք շրջապատումէին Հիւպատոսներին: Եգիպտոսն և Երաբիան, Հնդկաստանի ժողովուրդներն ու Մեզացիք, Պարթևք և զոռոզ Սիրէացիք՝ որոնք ծագումեն Սպարտացիներից, Մարմարացիք և սարսափահար Սիրտացիք, Մաւրններն և ուրիշ շատ ազգեր—չկարողացան ընդդիմադրել լէգէոնների քաջութեան: Ելլ ցած զնկով զէնքը խոնարհեցան լծի տակ և գողումէին...: Ռոզումէին արդէն ոչ թէ նուաճողների զէնքի առաջ, այլ Եկատրեան ճիպոտների՝ որոնք յիշեցնումէին այդ ազգերին իրանց անարգ սաքրական վիճակը:

Հանդարտեցաւ ճնշման ընդդիմադրութիւնը, թուլացան մարտնչողների բազուկները, մարեցան դէպի ազատութիւնը դարձած աչքերը, լռեցին ձայները՝ որոնք պաշտպանութիւն էին գոչում...:

Եւ սարսափից Հանդարտացած աշխարհում սաւառնումէր Հռովմական արծիւը, և Հռովմայ պետութիւնը Հանգստացաւ ստրուկ երկրի վերայ...:

Մի առժամանակ խաղաղութիւնը տիրեց: Բայց այս խաղաղութիւնը չբերաւ իւր հետ լուսաւորութիւն և բարիք, այլ՝ չարիք: Աեանքի արտի վերայ այլ ևս չէր ծաղկում Հացաբոյս, այլ՝ փուշ և տառասկ, որովհետեւ կեանքի արար չէր ոռոգվում բարերար անձրևով, այլ՝ ստրկութեան արիւնալի քրտինքով, և աշխարհի մի ծայրից մինչև միւսը՝ տիրած էր ճնշուածների և հալածեալների կոծը: Եւ ստրկութեան պառուշներով կերակրուող Հռովմայեցիներին նոյնպէս չէր հասնում բարիք, այդ պառուշներից թոյն էր պատրաստվում ժո-

ղովըդի մէջ, որով ամենից առաջ թունաւոր-
ուեցան կառավարիչները:

* * *

Որովհետեւ առաջին կայսրները հանդիպե-
լով ընդդիմադրութեան և հակառակութեան,
ոչ միայն խստութեան՝ այլև խելամտութեան
մէջ ստիպուած էին վարժուիլ. խելացի համես-
տութեան միջոցով գրաւումէին նրանց, որոնց
բազմակները դեռ կարողանումէին պաշտպանել
ազատութիւնը. մարդասիրութեան քօղի տակ
էին ծածկում ստրկութեան շղթան, որպէս զի
ազատութեան հպարտ որդւոց մէջ չյարուցա-
նէն ցանկութիւն պատերազմի մէջ մեռնելու:
Այս պատճառով նուաճելով Հրէաստանը,
թողեցին ժողովրդին հայրենական օրէնքները,
միաստուածապաշտութիւնն ու ինքնավարու-
թիւնը: Իսկ տաճարին մօտենալը արգելեցին
զինուորներին մահուան պատժով:

Եւ ահա, լռեցին ամեն տեղ ազատութեան
պատերազմի ձայները. ընկաւ նուաճողների
լռնութեան ընդդիմադրութիւնը. աշխարհ հա-

մոզուեցաւ իւր սկարութեան մէջ, միայն տեղ
տեղ ուժասպառ շարժելով շղթաները: Այս-
պէս անցնումէին տարիներ: Հռովմայեցիք սո-
վորեցան հրամայել աշխարհ սովորեցաւ հնա-
զանդել: Հռովմայ սրտում ծագեց մեծամտու-
թիւն: Նա մտածումէր. «այժմ ո՞վ կը հակա-
ռակէ ինձ»: Եւ պատասխանումէր. «ոչ ոք»: Իսկ
միւս երկիրներում արմատանումէին ստրկու-
թիւնը, սարսափի և խոնարհ երկիրագեղւո-
սովորութիւնները: Եւ Հռովմը մռնչումէր ախ-
եղերքում, ինչպէս զիշերը զիշակեր առիւծը
Նիւբեան անապատում: Իսկ տիեզերքը՝ անա-
պատի նման խորասուզուած մառախուղի և
ստրկութեան լռութեան մէջ, սարսափով լը-
սումէր բռնաւորի մռնչիւնը, յիշելով նախ-
նիւների չարչարանքները, բայց մոռանալով նը-
րանց փառքը: Եւ ինչպէս որ այդ ազգերի մէջ
փայլումէր ռիսակալութեան սուրբ զգացմունքը,
Հռովմում անյայտանումէր խոհունութեան
չափը: Անյայտացաւ նրա կառավարիչների ի-
մաստութիւնը, որը ստիպումէր ժողովրդին
խնայել իսկ նրա փոխանակ գլուխ բարձրացը-

րին շահատիրութիւնը, կոյր հպարտութիւնն
և արինադրութիւնը, որը ոչ մի տեղ չէր պա-
տահում ընդդիմադրութեան:

Յուլիոս և Օգոստոս կայսրերից յետոյ թա-
զաւորեց դաժան Տիրերիոսը, իսկ նրանից յե-
տոյ անմիտ Սպյոսը, որն ուխտեց Հռոմայ
անուան տակ վերջ տալ տիեզերքին: Եւ վեր-
ջապէս, թուլամիտ Սլաւտիոսից յետոյ թա-
զաւորեց մահկանացուներից ամենադաժանը—
Ներոնը, որն ի տես տիեզերքի անարգեց Ես-
տուծոյ օրէնքները կայսրական դահի բարձրու-
թիւնից: Օրծադելով համեստութեան վերայ,
լերան բարձրութեան վերայ դրեց ցոփութեան
օթեակը, և անմեղների արիւնով յաղեցրեց
զողացող երկիրը...:

* * *

Հրէաստանում վաղուց չկար ոչ համեստ
Պետրոնիան, և ոչ Պիղատոսը՝ որ մի ժամա-
նակ հանեց սուրբ քաղաքից դրօշակը կայսրի
պատկերով: որպէս զի չվերաւորէ ժողովրդի
զղացմունքը: Բայց կառավարիչ Սլբինոսը, ա-

ւաղակի նման ազահ և խիստ մարդը, անիրա-
ւութիւնների էր անում, այնպէս որ չարագոր-
ծութիւն չէր մնացել որ չանէր: «Որովհետեւ
իւր տիգաւորներին, որոնց նշանակել էր կարգ
պահելու համար, գործ էր դնում հանդիստ
ապրողներին աւերելու համար: Վերացել էր
խօսքի ազատութիւնը, և ոչ ոք չէր համար-
ձակում ձայն բարձրացնել դատելու և դանդա-
տելու համար, մինչդեռ շատերն էին իշխում»:
Ոչ ոք չէր կարող արդարացի օգնութիւն ցոյց
տալ, բայց աւերիչ և անարգել կարող էր ամեն
մի ոյժ ունեցող: Եյսպէս աճումէր ճնշուած-
ների և նուաճուածների տառապանքը...:

* * *

Եյսպէս աճումէր տառապանքը, բայց դեռ
չափը չէր լրացել:

Որովհետեւ Սլբինոսի տեղ նստող Հեսսիոս
Ֆլորը ցոյց տուաւ, որ իւր համամատութեամբ
Սլբինոսը կարող էր համարուել համեստ կա-
ռավարիչ: Մինչդեռ Սլբինոսը իւր չարագոր-
ծութիւններից շատերը կատարումէր գաղտնի

ու ծածուկ, Փլորը՝ Ներոնի նման կատարում էր բաց և համարձակ: Այն գործերում, որ պահանջվում էր ողորմածութիւն, նա լինում էր անխիղճ, վատ գործերը թողնելով անպատիժ, — նոյն իսկ ինքն պռաջինն էր լինում անամօթաբար պաշտպան և կողմնապահ:

Այսպէս աճում էր բռնութեան ծառը թուլութեան հողի վերայ, և հպարտութիւնը՝ խոնարհութեան հողի վերայ: Նւ ժողովրդի համար չկար յոյս և ելք, որովհետեւ արդարադատութեան աղբիւրները խափանուած էին:

* * *

Մի անգամ, պատահմամբ, Բաղարջակիրաց տօնին Նրուսաղէմ եկաւ Ասորւոյ կուսակալ Սեստիոս Պալլիացին, որը մեծ ոյժ և ձայն ունէր Հռովմայեցւոյ մէջ: Այն ժամանակ բազմաթիւ հրէաներ շրջապատած կառավարչին, բարձր աղերսանքով զանդատումէին Փլորի հալածանքի վերայ, խնդրելով նրանից արդարադատութիւն և պաշտպանութիւն: Սեստիոսը կանգնած բարձրութեան վերայ դէպի նա ձեռք կարկառած ժողովրդի մէջ՝ մտածում էր:

Նա դաժան զինուոր էր և չէր վախենում մահից, բայց վախենում էր իւր հրամայողների բարկութիւնից: Նրա սիրտը չէր դողում պատերազմի վառ հանդէսում, բայց դողում էր անողորմածութեան հայեացքի առաջ: Որովհետեւ այդպէս են բռնութեան ծառայողների սրտերը: Սրտին մտածեց Սեստիոսը. եթէ պաշտպանեմ սրանց, — կարող եմ եւթարկուել Ներոնի անողորմածասրտութեան, որովհետեւ Փլորը զօրեղ է պալատում, իսկ Ներոնը՝ արիւնարբոս: Եթէ չպաշտպանեմ, — ժողովրդեան համբերութեան չափը կանցնէ ու կապտամբէ: Այն ժամանակ կը ծագէ արիւնհեղութիւն, և ես ևս ստիպուած կլինեմ նրանց դէմ տանել լէգէոններս: Վերջինս աւելի լաւ է:

Նւ մինչդեռ նա այսպէս էր մտածում, ժողովուրդը ձեռքերը դէպի նա էր կարկառում, իսկ Փլորը նրա մօտ կանգնած համարձակ ծիծաղում էր ժողովրդի աղերսանքի և յուսոյ վերայ: Որովհետեւ գիտէր՝ որ արդարադատութիւն չեն դռնելու: Հանդարտեցնելով հրէաների ազաղակները, Սեստիոսը կեղծաւորութեամբ ա-

սաց նրանց, որ հանգիստ լինեն, որովհետեւ գիտէ որ Ֆլորը մտադիր է ողորմածասիրտ լինել դէպի ժողովուրդը: Իսկ արդարադատութեան մասին ոչ մի խօսք չասած հեռացաւ, և Ֆլորը նոյնպէս գնաց նրա հետ՝ որ ուղեկցէ մինչ իսկ Սեսարիա, իւր համակրութիւնը ցոյց տալու համար կուսակալին, որը պահպանեց իւր բարեկամութիւնը նրա հետ:

Արանից յետոյ ուղարկելով իւր զինուորներին Նրոնսաղէմ, պատուիրեց վերցնել տաճարի դանձարանից տասնուեօթը տաղանտ, որ պահվումէր Անտօնիա կոչուած աշտարակումը: Այսպէս Ֆլորը ձեռնամուկս եղաւ սուրբ վայրին, ձգտելով բոլորովին կողոպտել տաճարն և սնանկացնել ժողովուրդին:

* * *

Հռովմայեցւոց մէջ կար Աւլոս-Սատուլլոս անունով մի հաղարապետ: Վա ալեւոր զինուոր էր, յիշումէր քաջ և խելացի հրամանատարներին ժամանակները...: Խորամտուղուկով Ֆլորի դիտաւորութեանց մէջ ձայն բարձրացրեց լէգէոնների առաջ և ասաց.

— Յիշումես արդեօք, դու, Հեսսիոս Ֆլորի թէ ինչու ես ուղարկուած այս երկիրը. նրան համար արդեօք, որ նեղեն ժողովուրդն և ինքդ հարստանաս, թէ՛ ընդհակառակն—որպէս զի իմաստուն կառավարութեամբ պահպանես պետութեան միութիւնը: Նրբոր ճշնուած ժողովուրդն ապստամբի, նրա հետ կապստամբին և ուրիշները,—այն ժամանակ ի՞նչ պատասխան պիտի տաս Տերակոյտի առաջ:

Բայց Ֆլորը, հարբած շահասիրութեան ծաւրաւով և տտելութեամբ դէպի հրէաները, Տիւստոսի մէջ Աւլոս-Սատուլլոսի խօսքերի վերայ և անուշ:

— Եւ ճանաչումեմ հրէաներին: Միթէ այս անարդազոր պիտի յանդգնի՞ մեր քաջ Հռովմայեցիների դէմ: Ո՛չ, հռովմէական պետութիւնը չի՛ տատանուիլ սրանցից, իսկ մենք՝ քաջերս, հեշտութեամբ աւար ձեռք կրերենք: Իրէաները վախկոտ են և ձեռնարկութիւնների մէջ անմիաբան: Եթէ ապստամբուին էլ, այն ժամանակ հեշտ յաղթութեամբ, դէպք կնկրկայանայ մեծ աւարի, և այն առանց մի որեւէ

երկիւղե կայսրի և ծերակոյտի կողմից: Իսկ և-
թէ բոլորին համբերեն մեծ խոնարհութեամբ,
այն ժամանակ առանց դժուարութեան կյա-
փըշտակենք տաճարի գանձը և հարստացած
կվերադառնանք հայրենիք, տեղ բաց անկող
նոր լէգէոնների համար հեշտութեամբ հարս-
տանալու: Արովհետեւ աւարը՝ քաջերի բաժինն
է, իսկ նուաճուածներինը՝ ուրիշների համար
աշխատելը...: Այսպէս են մտածում բոլոր քա-
ջերը. իսկ դու, Սատուլլոս, փոքրոգի ես: Եւ
այս պատճառով արժանի չես քաջերին առաջ-
նորդելու, այլ պէտք է կանգնես հասարակ զի-
նուորների շարքումը, իսկ ուրիշները լէգէոն-
ների կառաջնորդին դէպի հարստութիւն: Այն
ժամանակ Հռովմայեցւոց մէջ բարձր ազադակ-
ներ լսուեցան: Եւ թէպէտ կային Սատուլլո-
սին սիրող և համախոհ զինուորներ, բայց այդ-
պիսիները սակաւ էին, և այս պատճառով չէ-
ին համարձակում խօսք ասել: Եւ Սատուլլո-
սը հանեց հրամանատարի զրահները և կանգ-
նեց հասարակ զինուորների շարքումը:

* * *

Իսկ Երուսաղէմում ժողովուրդի մէջ նոյնպէս
մեծ շփոթութիւն ընկաւ. անմիաբան լինելով
միմեանց, մարդիկ շատ հակառակում ու վի-
ճումէին: Ոմանք ձայն բարձրացնելով ասումէին.

— Մինչև ե՞րբ պիտի համբերենք մարդկանց
բռնութեան և սրբութեան անարգանքին: Թէ
չէ՞ք տեսնում, մինչև որտեղ են հասցնում Պը-
լորին շահամոլութիւնն ու չարազորութիւ-
նը...: Նա չէ՞ դադարելու մինչև սրբութեան
յափշտակութիւնը, իսկ յափշտակելուց յետոյ
պիտի դիմէ նորանոր բռնութեանց: Արովհետեւ
ինչպէս լէգէոններն են կանգնում դրօշակի շուր-
ջը, այնպէս և մեր ազգը՝ սրբութեան շուրջը:
Եւ եթէ թշնամին յափշտակումէ դրօշակը, լէ-
գէոնը յաղթվումէ և թշնամին հեշտութեամբ
կոտորումէ փախչողներին: Այսպէս և Պըլորը
կտսէ ինքն իրան. եթէ այս ազգը չկարողացաւ
պաշտպանել իւր սրբութիւնը, այլ ևս ինչի՞ն
պիտի դիմադրէ և ի՞նչ չպիտի կարողանամ
բերել սրա գլուխը: Միթէ մենք այս ևնք ցան-
կանում: Միթէ ցանկանում ենք՝ որ լէգէոնների
զինուորները՝ աւարով ծանրաբեռնուած վերա-

դասնալով ասին իրանց ընկերներին. «գնացէ՛ք
Հրէաստան, որովհեաւ այնտեղ ժողովուրդը
փոքրագի է, իսկ զինուորին պատերազմի մէջ
վտանգ չէ սպառնուս, այլ՝ միայն բաւականու-
թիւն. հրէաները չեն պաշտպանում միմեանց,
այլ հայերը խոնարհութեամբ իրանց մատա-
ղահաս և կոյս աղջիկներին բերումեն զինուոր-
ների օթեակը»:

Այսպէս խօսելով յուզումէին ժողովրդի մէջ
ապստամբութեան զգացմունքներն և շատերն
ասումէին. «աւելի լաւ է մեռնել Աստօնիայի
չէմքում սրբութեան և պատուի պաշտպանու-
թեան համար: Պէտքը սուր է կամենում, սուր
կունենայ: Այցարից մենք չենք տեսնում արդա-
րագատութիւն, ուրեմն, թող մօրաք կառա-
վարող Աստուածը դատէ մեզ Պէտքի հետ»:

Այս մտքի էին ժողովրդից և զիառններից
շատերը, շատ իմաստուններ և ի միջն այլոց—
Յուզայի որդի Պամազացի Մենաքէմը, որի
հայրը՝ հայրենիքի ազատութեան համար ա-
րիւն էր թափել պատերազմում: Հայրը որ-
դուն կտակել էր իւր սէրն ու վեճիկները

թիւնը: Նորա սէրն էր՝ սէր դէպի ազատու-
թիւն, իսկ վեճիկները թիւնն՝ — իս դէպի ճըն-
շողները: Որովհետեւ, իւր հօր նման, Մենա-
քէմն էլ ասումէր. «արժանի չէ երկրպագու-
թիւն տալ կայսրների սեղաններին, որովհետեւ
կայսրները մարդիկ են. երկրպագութեան ար-
ժանի է միայն Աստուած, որը մարդկանց ստեղ-
տեց ազատութեան համար»:

Բացի սրանից, իմաստուն Մենաքէմը, ցա-
ւելով իւր ազգի տկարութեան վերայ, խորա-
սուզվումէր զրքերի ուսումնասիրութեան մէջ,
իմանում նրանցից զանազան կտակներ, և օ-
տար գրուածներից այն բոլորը, ինչ որ ծագում
էր երկրի վերայ, և որ կայ չար ու բարի, և
թէ ինչո՞ւմն է զօրեղ ազգերի ոյժը, և թէ ին-
չո՞նքն է յառաջանում նուաճվողների թուլու-
թիւնը: Ուսման մէջ մեծ էր և չէր նմանում
գոռոզ Փարիսեցիներին, և ոչ ևս տաճարից կե-
րակրուող խոնարհ Սաղուկեցիներին: Բայց
փորձառու խելքով առանց հոգնելու փնտռում
էր ճշմարտութիւնը, դարձնելով իւր հոգւոյ
ձգտումները առաջ, և ոչ յետ:

Մենաքէմի համբաւը տարածվումներ ժողովրդի մէջ, և մինչև անգամ օտարներն իմաստուն Պամաղացուն անուանումէին սուր փիլսոփայ. որովհետեւ նրա լեզուն նման էր սրբին, որը կտրումէր կեղծ և սուտ խօսքերը: Մենաքէմի սրտումն ևս, ինչպէս փայլուն բոց, այրվումէր սէր և վրէժխնդրութիւն: Մէրը՝ բոց էր, իսկ վրէժխնդրութիւնը՝ — հողմ: Որովհետեւ վրէժխնդրութեան ոգին զօրանալուն պէս, Մենաքէմն իւր սիրտը տալիս էր ժողովրդին, — այն սիրտը, որը այրվումէր սիրով: Եթէ վրէժխնդրութիւնը համեմատենք բոցի հետ, այն ժամանակ սէրը կլինի հողմ, որովհետեւ սէրից ծագումէ վրէժխնդրութիւն դէպի ճշնշողները:

Ելժմ Մենաքէմը սրի էր հրաւիրում Երուսաղեմացիներին, Պաղիկէացիներին և քաջ պատերազմող Եղումէացիներին: Ապստամբեցէք, ասումէր նա, այն ժամանակ Աստուծոյ դատաստանը կհասնէ և մենք կազատուենք Փլորից:

Բայց Երուսաղեմում ոմանք հակառակ կարծիքի էին:

«Բանի որ, — ասումէին նրանք, Պլորը պատերազմ է կամենում, մենք պիտի պահենք համեստութիւն և համբերութիւն, որպէս զի ունեցածներէրցս էլ չզրկուինք»: Եյսպիսիներէրցն էին քահանաներն և իշխանները, և նրանք՝ որոնք տաճարէրցն էին կիրակրվում, և հարուստներն, որոնք վախենումէին կորցնել հարստութիւնը. այս պատճառով, սրանք շրջումէին ժողովրդի մէջ, ընկնումէին ժողովրդի սատրին դասի ոտները և սարկօրէն զրկում նրանց ծնկները, որպէս զի նրանց միտքը փոխն դէպի համեստութիւնը և համբերութիւն: Եւ ժողովուրդը հակուեցաւ խաղաղութեան կողմը:

* * *

Սակայն, Պլորը մօտենումէր զօրքով, վերադառնալով Ասարիայից: Երուսաղեմի ժողովուրդը՝ դուրս գալով քաղաքից, հանդիպեցաւ նրան և բարեմաղթութիւննիր արեց լէզէոնին: Բայց Պլորը բարկացաւ: — Անարգնե՛ր, — ասաց նա, գիտեմ, որ իւրաքանչիւրը ձեզանից իւր

սրտում ատումէ ինձ, բայց բերաններումդ կեղծ
ողջոյն...: Օւէնքը ձեռքերնիդ կհանդիպէիք մեզ,
եթէ պատուի և ճշմարտութեան մարդիկ լի-
նէիք: Պեռ շատ չէ՛ անցել, որ դանգատումէիք
ինձանից, իսկ այժմ՝ կեղծաւորութիւնը ձեր
բերանումն է: Եւ հրամայեց իւր զինուորնե-
րին յարձակուել հրէաների վերայ: Այն ժա-
մանակ՝ ողջունելու եկածները սաստիկ վա-
խեցած վազումէին դէպի քաղաքը: Իսկ իւր-
մայեցիները՝ ինչպէս գայլեր հալածումէին նրանց:
Եւ այսպէս ազաղակի, խռովութեան և կոծի
մէջ գիշերը վերայ հասաւ...: Իսկ առաւօտեան՝
Ֆլորը հրամայեց իւր զինուորներին աւերել
Տաղաւարահարաց տօնախմբութիւնը, զինուոր-
ներն աւերումէին, իսկ պատահածներին ան-
խնայ կոտորում: Այն ժամանակ սկսուեցան
փողոցներով մարդիկների փախուստը, նրանց
կոտորումն, կանանց բռնաբարութիւն և կոյ-
սերի պղծումն: Սանայքներով և մանուկներով
հանդերձ այդ օրը կոտորեցին ընդամենը վեց
հազար երեք հարիւր հրէայ:

* * *

Այն ժամանակ յուզուած ժողովրդեան մեծ
բազմութիւն հաւաքուեցաւ տօնախմբութեան
տեղը, այնպէս որ ասեղ ձգելու տեղ չկար:
Խռովութիւնը յուզող մարդիկ, հաւաքուելով
Պամադացու շուրջը, յուզումէին ժողովրդի
մէջ աւերութեան և անմեղ կոտորուածների
արեան վրէժխնդրութիւնը: Բայց մեծամաս-
նութիւնը մեծ կոծով սգումէր սպանուածնե-
րին: Ֆլորը՝ հաւաքելով զինուորներին, փախ-
ուեցաւ իւր պալատում, սպասելով, թէ ի՞նչ
պիտի անէ ժողովուրդը, և իւրմայեցիք ա-
սումէին, «չափից դուրս զայրացրինք այս ժո-
ղովրդին...: Ի՛նչպէս չկորչենք դրա համար»: Իսկ
Ֆլորը լռել էր: Բայց նշանաւոր քաղա-
քացիներն և քահանայապետները դարձեալ մը-
տան ժողովրդի մէջ, հասարակ մարդիկների
ծնկներն ընկնելով, խնդրումէին հանգստանալ.
«որովհետեւ, ասումէին նրանք, Ֆլորն այժմ
հանգստացաւ, ինչպէս արիւնով յագեցած ա-
ռիւծը: Մի՛ արթնացնէք առիւծին իւր որ-
ջում, որպէս զի չգրգռէք նոր յարձակմունք-
ներ անելու»: Ժողովուրդը կրկին լսելով նը-

րանց աղերսանքներին, դադարեցնելով լացը, սկսեց ցրուել: Ի զուր խռովայոյզ Պամաղացին ձայն էր բարձրացնում և զէնքի հրաւիրում: Նա նմանումէր անապատի առիւծին, որի ձեռքից բաց էր ընկել որսը: Ի զուր էր կրճատցնում ատամներն ու ձգտում պատառել ճանդերով կրկրի անդունդը:

* * *

Առաջնորդներն և քահանայապետները գնալով Ֆլորի առեն, մտան նրա մօտ և ասացին այն դաժան հռովմայեցուն. «ահա մենք հանդարտեցրինք ժողովուրդին, նայի՛ր մեր խոնարհութեան վերայ»: Իսկ Ֆլորը ծիծաղով դարձաւ հազարապետներին և հարիւրապետներին ու ասաց. «ահա տեսնումէք»: Մտածելով նորից մի ամենաչար խորամանկութիւն, հրէաներին ևս շատ կախուղ պատասխանեց.

—Տեսնումեմ, որ դուք խաղաղացել էք, բայց չգիտեմ դեռ մինչև որ աստիճան: Որպէս զի համոզէք մեզ՝ ամենքիս,—նորից դուրս եկէք ժողովրդի հետ միասին հանդիպելու և ող-

ջունելու Ասորեստանից վերադարձող մեր լէգէոններին: Իսկ ինքն առաջուց ուղարկեց այն լէգէոններին իւր պատուէրները: Քահանաներն և առաջնորդները շփոթուեցան, որովհետև հասկացան, որ ամենագոյնաբար առաջներումն է: Այդ պատճառով, մտնելով տաճարը, հազան բոլոր զարդերը, որով կատարվումէր ժամասացութիւնը, վերցրին նոյնպէս սրբազան անօթները, և առնելով իրանց հետ երգ երգոյցներին իրանց բոլոր գործիքներով, գնացին փողոցներով, զրաւելով ժողովուրդին հանդիսի շքեղութեամբ: Արբոր ժողովուրդը հաւաքուեցաւ, նորից սկսեցին նրանց ոտներն ընկնիլ, խնդրելով այս անգամ ևս հնազանդիլ և հռովմայեցիկներին չհասցնել մինչև այն աստիճան, որ նրանք յափշտակեն բոլոր անօթները: Քահանայապետները զլուխները կախած ու մոխրոտած, պատառոտած շորերով և բաց կուրծքերով հեծեծումէին: «Մեզ պահեցէք այդ անօթները,—աղաչումէին նրանք:—Ձեր անհնազանդութեամբ մի՛ տաք հայրենիքը նրանց ձեռքը, որոնք ձգտումեն մինչև հիմքը

աւերել: Արովհետեւ, եթէ հնազանդութիւն
ցոյց տաք և նորից հանդիպէք զինուորներին
խոնարհ ողջոյնով, այն ժամանակ Ֆլորին չի
մնալ ոչ մի առիթ նորից յարձակուելու, իսկ
դուք և հայրենիքը, և ինքեանքդ ևս չէք դի-
մադրիլ: Այսպէս էին խօսում նրանք, և մի
անգամ ևս համոզեցին յուզուած ժողովրդին:
Իսկ Մենաքէմ Գամաղացին քաղաքի վերին
մասում չէր. հեռանալով Յովհաննէս քահա-
նայապետի գերեզմանի մօտ, որը գտնվում էր
քաղաքի պարսպից դուրս, — Մենաքէմը՝ իւր
աշակերտների, Գալիլէացի և Իդումէացի ա-
պրստամբների հետ պատրաստուում էր գնալ
Գալիլէա: Այս պատճառով արդէլք չէր լի-
նում քահանայապետներին: Եւ նրանք՝ դուրս
հանելով ժողովրդին Աեսարիայի ճանապարհը,
հանդարտ և կարգով ամենքը գնացին լէգէոն-
ներին հանդիպելու:

* * *

Ոստիկաններ և փոշու մէջ մօտեցան
նրանց հռովմէական դաժան զինուորները և
յուր կանգնեցան. հրէաները չլսեցին իրանց

ողջունի պատասխանը: Նրբոր հրէաները սկսե-
ցին ձայն բարձրացնել ու խնդրել զինուորնե-
րին ներողամիտ լինել դէպի ժողովուրդը, և
որ չվարուին Ֆլորի նման, — այն ժամանակ
Հռովմայեցիները դարձեալ սրերով և նիզակ-
ներով յարձակուեցան հրէաների վերայ և նը-
րանք նորից փախան: Արկին մարդասպանու-
թիւն եղաւ. Հռովմայեցիք հալածում էին փախ-
չողներին և ջարդում ձիերով: Քաղաքի դըռ-
ների մօտ խռնուած մարդկանց բազմութեան
պատճառով մեծ կորուստ եղաւ հրէաներից,
այնպէս որ ազատուածներից ևս չմնաց ոչ մի
մարդ, որին կարողանային ճանաչել ամենամօ-
տիկ ազգականներն անգամ:

Նրեան հոտով և մարդկանց կոծերով տա-
քացած զինուորները յարձակուեցան Աւղեփի
միջով և կոտորած անելով քաղաքի փողոցնե-
րում, ձգտում էին հասնել Ննտօնիային, մտա-
ծելով պատերազմի խառնուածքում յափշտա-
կել տաճարի գանձը: Եւ Ֆլորը դուրս գալով
պաշտօնից, նայում էր պատերազմի հանդէսին,
ասելով իւր զինուորներին. «Ի դուր վախեցաք

դուք այս ժողովրդից: Ահա այժմ՝ մենք՝ երկու
ափ քաջերս, հալածումենք ամբողջ ժողովրդին
և առանց մի մեծ դժուարութեան կարող ենք
գանձը յափշտակել»:

Այսպէս հատուցին Հռովմայեցիները հրէա-
ներին նրանց խոնարհութեան փոխանակ, ու-
րովհետեւ չէին գտնում ընդդիմադրութիւն
բռնութեան դէմ: Բայց գանձը չկարողացան
յափշտակել, որովհետեւ ապստամբ մարդիկ,
նրանց հետ և Մենաքէմ Պամաղացին լսեցին
համաքաղաքացիների կոծը, յարձակուեցան Հը-
ռովմայեցիների վերայ և կտրեցին այն փողոց-
ները, որոնցից պիտի գնային դէպի Անտօնիան
և տաճարը: Յետոյ փակեցին տաճարից դէպի
Անտօնիա տանող անցքերը, Հռովմայեցիների
աշտարակ մտնելու յոյսը կտրեցին և այսպիսով
զսպեցին Պլորի արծաթասիրութիւնը: Քա-
ջալերուած հրէաները, կանգնելով անցքերի
բարձրութեանց վերայ, քարեր էին ձգում վե-
րեւից Հռովմայեցիների վերայ: Այն ժամանակ
լէգէոնները սարսափելով վերջնական կորստից
և մոռանալով շահասիրութիւնը, յետ քաջուե-

ցին: Իսկ հրէաները, ինչպէս որսորդների խում-
բը փախչող գաղանների վերայ, յարձակուեցան
փախուստ տուողների վերայ և Հռովմայեցի-
ներից շատերը՝ արիւնաթաթաւ գէկքով և
թաւալուելով փոշու մէջ, սպանուեցան փողոց-
ներում: Եւ Պլորը, պիտերը շարժելով ու ամա-
չելով անյաջողութիւնից, տաքացած հրէանե-
րից իւր կեանքն ազատելու համար, յետ քաջ-
ուեցաւ միւսների հետ:

Այսպէս զիշերը վերայ հասաւ, բայց և զի-
շերը՝ փողոցներում, տաճարի վերայ, բոլոր հը-
րապարակներում և անցքերում՝ տիրած էր
ձայների խուլ աղմուկը, իսկ լրացած լուսինը
լուսաւորումէր ապստամբ ժողովրդի շարժո-
ղութիւնը: Ուրովհետեւ ժողովրդի զայրացի-
տութեամբ լեցուել էր համբերութեան բա-
ժակը:

* * *

Իսկ Հռովմայեցիք վերցրին բանակները Պլո-
րի պալատի մօտից, և զինուորները կանգ-
նած էին մոռացել լուրթեան մէջ, որովհետեւ ի-

րանց խիստ և անհեռառես վարմունքի պատ-
ճառով Հանդիպեցան ընդդիմադրութեան: Սա-
յեցան երկնքին և տեսան հրաշք. լուսինը՝ խո-
նարհելով գէպի երկիւն: Կարմիր էր ու կարծես
արեան ալեքների մէջ լինի թաթախուած. տա-
ճարի պատերը լուսաւորուել էին կարմիր գոյ-
նով ու կարծես սպանուածների արիւնն է
թափուել երկրի և երկնքի վերայ և ապստամբ
ժողովուրդի կոծերի հետ խառնուելով խառնում
էր՝ Երուսաղեմի բլուրների վերայ տարածուած
ծանր ամպի նման: Եւ լեզէոնները յիշեցին
խելացի Աւլոսի խօսքերը, իսկ նրա համախոհ-
ները ձայն բարձրացրին, ասելով.

— Զին հաղարապետը ճշմարիտ էր ասում,
իսկ Պլորը մեզ խայտառակեց:

Եւ ժողովուրդով Աւլոսի շուրջը, ուղարկե-
ցին նրան Հեսիոսի մօտ զօրքի կողմից ասելու.

— Այս լոպէիս կրկին հնազանդումենք քեզ,
բայց խմացիր, խիստ մարդ, որ մենք ինքնիրս
կգանդատենք քո վերայ ծերակցդին: Նայիր,
մեր և հրէաների արիւնը բողբումէ քեզանից
երկնքին: Այս՝ սակաւաթիւ խելօքների խօս-

քերն էին, որոնք այժմ նշանակութիւն էին
ստոյգեր իսկ յանդուգները, որոնք առաջ Պլո-
րի կողմն էին,— լուել էին, որովհետեւ տեսան
ժողովուրդի անսպասելի ապստամբութիւնն և ի-
րանց անյաջողութիւնը. այս պատճառով մե-
ծամասնութիւնը անցաւ խելացիների կողմը:
Իսկ կարմիր գոյնը՝ աւելի ու աւելի պատում
էր երկինքն ու երկիրը...

Երբ որ ծածկուեցաւ լուսինը, երկիրը հա-
զաւ իւր սեւը, իսկ գիշերուայ երկրորդ մասին
յաջորդեց առաջինը,— Պլորը դուրս եկաւ գա-
ժանացած պալատից ու ամօթալից աչքերը
կախ ձգելով, լուութեամբ հանեց լեզէոնները
քաղաքից:

Առաւօտեան հրէից սուրբ քաղաքում չկա-
յին այլ ևս Հռովմայեցիներ:

Բ.

Համալ քաղաքի վրայով արեգակը մայր մը-
տաւ...

Խաղաղ գիշերը վերայ հասաւ ամբողջ հը-
րէից երկրի վերայ, հովանաւորելով այդ երկի-
րը հանգստութեան նինջով...:

Նրեկոյեան, ստուերները դեռ ևս տեղ տեղ
փայլիլումէին հովիտներում, բայց գիշերը դեռ
չէր վառել իւր փայլուն զամբարները: Նա դեռ
չէր երևում այն հրեղէն սուրը, որն ահա քա-
նի գիշեր փայլումէր կապոյտ եթերքում և այր-
վում երկնքում դողացնելով մարդկանց սրտերը:

Գոռոզ աստղը, ինչպէս հրեշտակի հրեղէն
սուրը, ամեն գիշեր հանդարտ լողումէր ան-
սահման տարածութեան մէջ, և այն լուսէին՝
մարդիկ զգումէին, որ նոյնպէս աշխարհում
կատարվումն մեծ դէպքեր և դժբաղդութիւն...:

Բայց՝ արեգակի այս հանդարտ մայր մանե-
լու լուսէին, — կարծես թէ, աշխարհք մոռա-
ցել էր դժբաղդութեանց վկայ աստղին, և ան-
հոգ ննջումէր հանգստութեան անոյշ նինջով:

Նկունքները կապուտեղ էին, արեւմուտքը փայ-
լումէր ոսկեայ գոյնով, թագ էին կացիլ սպի-
տակ ամպերը, խոնարհեցրել էին իրանց զլուս-
ները շքեղ արմաւենիները, և հեռու, փայլիլը-

լելով արեգակի վերջին ճառագայթներէից, ոլոր
մոլոր բարձրանումէր փոշին ճանապարհի վե-
րայ...:

Նա միայն այնտեղ, աստղերից բարձր, հրեշ-
տակների դասերը կանգնած էին Նհովայ—Աս-
տուծոյ դահի առաջ, ծածկումէին աչքերը
ձեռքերով և հասարակ մահկանացուների հա-
մար անլսելի ձայնով գոչում:

— Վայ քեզ, Նրուսաղէմ, վայ քեզ, Գե-
թարա, և դժբախտ ու ինքնասպան Յովսա-
պատ. *):

Բայց մահկանացուները չէին լսում այս հի-

*) Հռովմայեցիք՝ Հրէաստանը նուաճելու ժա-
մանակ, պաշարուած Յովսապատ քաղաքի պատե-
րից բարձրանալով, նրա բոլոր բնակիչներին մե-
ռած գտան: Օխոռորները մի պառաւ կին գտան,
որից՝ հարց ու փորձ անելուց յետոյ իմացան, որ
պաշարման նախկին օրը, հրէաները՝ նախադասե-
լով մահը ստրկութիւնից, առաջ կոտորումն ի-
րանց կանանց ու երեխաներին, և ապա իրանք ի-
րանց եւն սպանում:

(Յովսէփ Քլաւիոս. «Հրէից պատերազմը»)

ծեծանքները և մօտ ապառնիի վարագոյրը չէր բացվում նրանց հայկացքի առաջ:

Ներքեւում, արեւմտեան մառախուղով պատած երկրի վերայ կար միայն ներկան:

Աստուած դատապարտեց մահկանացուներին— չնախատեսել ապագան, այլ հետաքրքրութեամբ հետախուզելով զանեւ կեանքի խաւարի մէջ թէ՛ որտեղ է բարին և որտեղ չարը:

Սոյր ժողովուրդը զուարճանումէր:

Յետ քաջուկեցան Պլորի լէզէոնները, և Աեռտիոսը պատահեցաւ անյաջողութեան:

Աարծես թէ անցել էին դժբախտութիւնները. Վալիլէացի աղջիկները պսակներ էին հիւսում և երգեր էին երգում:

Իսկ Նրուսաղեմում Փարիսեցիք մինչև անգամ աւետում էին ազատութեան լուրը:

Իայց Մենաքէմ Վամաղաջին չէր մասնակցում այս ուրախութիւններին: Նա գիտէր, որ պատերազմը դեռ առաջ է, որ հռովմէական արծիւը նորից սրումէ իւր ծանկերը, և այս պատճառով, հեռանալով Նրուսաղեմից, շրո-

ջումէր զանազան տեղեր և նորից զօրք ժողովում: Իսկ այժմ, հոգնելով զէնքի հրաւիրելուց, վերադարձել էր իւր տունը հանգստանալու համար:

Նւ նայելով վերջնալոյսի և կապոյտ երկնքի վերայ, նա լաց եղաւ, որովհետև պայծառ երկինքը կենդանի վկայ էր յաւիտենական խաղաղութեան, իսկ նրա սիրտը՝ զղուելով արիւնահեղութիւնից և հալածանքից, պապականմէր երկրի վերայ մշանջենական խաղաղութեան: Նւ կարծես թէ՛ նրա սիրտը թեթեանումէր խաղաղ արշալոյսի քնքոյշ շնչառութեամբ, և Վամաղացու հոգու մէջ՝ իջնում խաղաղ մոռացութիւն: Տան շէմքում, նրա շուրջը պառկած էին իւր աշակերտներն ու ապստամբ մարդիկ:

Ամենքը լռել էին, լռել էր և նրանց ուսուցիչը, որի վրայով թռել էր քնոյ հրեշտակը... Նա մոռացել էր հռովմայեցիներին, սպանուած եղբայրներին, ազատութեան համար պատերազմում սպանուած հօրը, մոռացել էր և անմեղ թափուած արիւնը, և այն՝ որ նրան սպասումէն սպանութիւն և վտանգ:

Եւ խոր անքաշելով Պամաղացին ասաց.
— Մարդիկ պիտի լինեն եղբոր պէս, իսկ
Աստուծոյ աշխարհը լաւ է...:

* * *

Բայց հեռուում փոշին՝ բարձրանալով ճանապարհի վերայ, կամաց կամաց մօտենումէր. Պամաղացին՝ ձեռքերը աչքերի վերայ դնելով, տեսաւ մի խումբ մարդիկ, որոնք դէպի նրա տունն էին գալիս: Սրանք՝ էին Մենաքէմին Նրուսաղէմից համբաւ բերողները, Պալելիէացի գիւղացիները, Եղումէացիները և սպիտակ շորերով Նստէացիները: Նրանք վիճումէին միմեանց հետ, իրանց ձայների աղաղակով խլացնելով երեկոյեան լուսթիւնը: Այսպէս սրանք մօտեցան Մենաքէմի տան, մի քանիսը թափ էին տալիս շորերի փոշին, բայց ոչ մէկը չէր դադարում վիճելուց: Նրբ որ բոլորովին մօտեցան, այն ժամանակ կանգնեցին, և Մենաքէմը հարցրեց, թէ՛ ինչո՞ւմն է նրանց վիճաբանութիւնը:

* * *

Յառաջ եկան համբաւաբերներն և ասացին.
— Մենք Նրուսաղէմից լուր ենք բերել, և ամենից առաջ մեզ լսիր:
— Մենաքէմն ասաց. «խօսեցէք», և նրանք սկսեցին պատմել Պամաղացուն.

— Այն օրից՝ որ դու և ուրիշ շատերը հեռացաք Նրուսաղէմից, որպէս զի ժողովրդին օդնութեան կանչէք,— Ազրիպպա թագաւորը, որ բացակայ էր, վերադարձաւ Նրուսաղէմ: Տեսնելով որ ժողովուրդը պատրաստուում է թափել թշնամու լուծը, շատ վշտացաւ, մրտաճելով իւր իշխանութեան վերայ...:

Որովհետեւ, եթէ միանայ ժողովուրդի հետ, այն ժամանակ եթէ հռովմայեցիները յաղթեն, անպատճառ կզոյեն նորան զահից, նոյնպէս և հրէաները՝—եթէ միանայ հռովմայեցիների հետ:

Ազրիպպա թագաւորը գահ ունի և այդ պատճառով պատրաստ է հաշտուել սարկութեան հետ:

Հաւաքելով ժողովրդին շատ խոստումներ է արել նրան:

Ժողովուրդը կանգնած է ցած՝ փողոցնե-

*

րում, իսկ թագաւորը՝ վերեւ անցքերի վերայ։
Իւր քոյր Վերոնիկային, որին՝ համեստութեան համար ժողովուրդը շատ սիրումէ, կանգնեցրած է իւր դիմաց՝ Ամոնեանի տան պատը շղարհում, հրամայելով՝ որ ամենքի առաջ կեղծ արտասուք թափէ։ Այսպէս ահա իւր պերճախօսութեան ուժով կամենումէր ժողովրդի միտքը փոխել, իսկ քրոջ արտասուքներով — հանգցնել ժողովրդի բարկութեան բողոքը։ Իւր ճառի մէջ՝ Ներոնին անուանումէր համեստ կառավարիչ, իսկ Հռովմայեցիներին — մեծահոգի յաղթողներ, և ասումէր. «ոչ մի բան այնպէս չէ կակղացնում հարուածների ցուր, ինչպէս վիրաւորեալների համեստութիւնն և համբերութիւնը...»։ Նւ շատերի միտքը պղտորեց։ Այժմ երկրի զանազան տեղերում կրկնումէն Ագրիպպայի խօսքերը, և միահոգի ապրտամբած ժողովրդի մէջ խռովութիւն տարածում։ Նւ ահա այս մեզ հետ եկողները նոյնպէս զանազան կարծիքի են, ուստի և վիճում են...։

Նրբոր համբաւաբերները վերջացրին իրանց

պատմութիւնը, այն ժամանակ Մատթիա և Ջաքարիա վաճառականներն առաջ եկան և ասացին.

— Ագրիպպան ճշմարիտ է ասում, իսկ դու և քո համախոհները չարիք էք ցանում. քո հայրը սպանուեցաւ պատերազմում և անմեղ տեղ պատճառ եղաւ մեր հայրերի սպանման, իսկ այժմ՝ քո խռովութիւններովդ դու կամենում ես կորցնել հանդիստ ապրող վաճառականներին։ Ի՞նչ կեանքդ չես գնահատում, որովհետեւ հարստութիւն չունիս, իսկ մենք գնահատումենք։ Սպանուած Յուդայի որդի Մենաքէմ, ճանաչելի ճշմարտութիւնը։

Մենաքէմը վաճառականներին սառն կերպով պատասխանեց.

— Իմ հայրս սպանուեցաւ, նոյնպէս և ձերը. իմ հայրս՝ հայրենիքի աղատութեան համար՝ զէնքը ձեռքին սպանուեցաւ, իսկ ձեր հայրերին սպանեցին արիւնարբու թշնամիները. բայց ճշմարիտն եմ ասում ձեզ, ոչ թէ իմ հայրս սպանել տուաւ ձեր հայրերին, այլ

ընդհակառակն—նրանք եղան քաջ Յուդայի սպանման պատճառը:

Վաճառականներն զարմացած հարցրին. «ի՞նչպէս». Մենաքէմը պատասխանեց.

—Յուդան՝ ընդդիմադրելով թշնամիների բռնութեան, կատարումէր իւր հայրենիքի պարտքը: Այսպէս են վարուել Պարթևների, Նոմիդացիների, Մալքների և ուրիշ ամեն ազգերի քաջ մարդիկ: Եթէ այս պարտքն ամենքն էլ կատարէին, այն ժամանակ Հռոմը չէր համարձակիլ իւր սահմանից դուրս գալ, երկրի վերայ կը տիրէր խաղաղութիւնը և երկիրը չէր հեծեծիլ ստրկութեան լծի տակ, և իմ հայրս էլ կենդանի կը լինէր: Բայց ձեր հայրերը, ինչպէս և ուրիշ ազգերի փոքրոգի մարդիք, առանց օգնութեան թողեցին իրանց պաշտպաններին և սպանուեցան, իսկ մեզ՝ նրանց որդիներին, մնաց ստրկութեան անարգ վիճակը: Ահա՛ ձեզ իմ պատասխանս, վաճառականներ, այժմ կարող էք գնալ:

* * *

Այն ժամանակ մօտեցան սպիտակ շորերով Եսսէացիներն ու ասացին.

—Պառ քո ուսումով չարութիւն ես ցանում, իմաստուն Մենաքէմ, որով ձգտումես թափանցել ամեն բանի մէջ, ինչ որ եղել է, ինչ որ կայ և ինչ որ պիտի լինի: Միթէ մարդու համար բաւական չէ՞ իմանալ Մովսէսի օրէնքներն և ինչպէս հող հերկելը...: Վայ քեզ, Յուդայի որդի Մենաքէմ...: Երբ որ քաղաքը պաշարումեն և նա ընդդիմադրումէ, այն ժամանակ պաշարողները խնայումեն համեստների կեանքը, իսկ խռովարարներին մահով են պատժում: Մենք՝ համեստութեան քարոզողներս, դուրս կգանք այդ ընդհանուր կորստից, թէև դրա համար ստիպուած լինենք թողնել հայրենի հողը, բայց մենք, մեր երեխաներն և մեր ուսումը կփրկուինք...: Իսկ դուք, խռովարարներդ, կմեռնէք մահով...: Եւ այս պատճառով մենք կենդանի մարդիկ ենք, իսկ դուք դատապարտուած մահուան...: Որի՞ ուսումն աւելի օգտակար է...:

Եւ նրանք՝ շարունակ առականեր էին ասում,

որոնց Մենաքէմը լսումէր ուշադրութեամբ, թէ՛ երկրորդը և թէ՛ երրորդը, որոնց մէջ արծարծումէին այն միտքը՝ թէ՛ պատերազմը չարութիւնն է։—Տուրը չէն չորացնում ջրով, ասումէին նրանք, այլ կրակով, և կրակը չէն հանգցնում բոցով, այլ ջրով։ Այսպէս և ոյժը չէն յաղթում ոյժով, որը չարութիւնն է...

* * *

Այս խօսքերի վերայ Բէն-Յուդայի որդի Մենաքէմի աշակերտները սաստիկ յուզուեցան. իսկ ինքը՝ Մենաքէմը չյուզուեցաւ և պատասխանեց.

—Ճմարիտն ասացիք դուք, համեստ Նասէացիք, բոլորովին ճմարիտք. երբոր քաղաքը ընդդիմադրումէ, այն ժամանակ պաշարողները զէնքը ուղղումեն նրանց դէմ, որոնք պաշտպանումեն քաղաքը, իսկ նրանց՝ որոնք հակուած են անձնատուր լինել, կեանք են խոստանում, որպէս ղի աւելի ևս շատերին դրաւ են անձնատուր լինելու ։։ Այո, այդ ճմարիտ է։ Բայց երբոր թշնամիները յարձակվումեն քաղաքի վերայ, և

ոչ ոք չէ սիրտ անում պաշտպանել, այն ժամանակ ի՞նչ են անում բռնաւորները... Միթէ նրանք՝ առանց խորութեան և ողորմելու չէն կոտորում ամենքին... Յիշումէք Ֆլորին, նրա զինուորները միատեսակ չկոտորեցին նրանց՝ որոնք կանգնած էին զէնքը ձեռքին, և նրանց՝ որոնք խոնարհ ողջոյնով լէզէոնների առաջ դուրս եկան... Իսկ այժմ Աեստիոսը, ողբելով մեզ հետ, զրաւումէ ձեզ անվտանգութեան և պաշտպանութեան խոստումով։ Մահկանացու աչքին տեսանելի չէ Աստուծոյ ճանապարհը շատ կարելի է մենք՝ հայրենիքի աղատութեան պաշտպաններս կսպաննուինք, իսկ դուք՝ ձեր որդիքներով և որդւոց որդիքներով կենդանի կմնաք։ Այն ժամանակ, խոնարհ Նասէացիք, շնորհակալութեամբ չէք յիշել մեզ ապրտամբներիս, նուաձողների բոլոր զայրոյթը մեզ վերայ դարձնողներիս և մեր մահով խաղաղութիւն և հանգստութիւն գնողներիս... Շնորհակալ եղէք, համեստ և կեանք խնայող Նասէացիք, հայրենիքի համար կեանք դնողներից, որովհետեւ ձեր համբաւութիւնը գնա-

Հատվումէ մեր ապստամբութեամբ, իսկ ձեր
Հանգստութիւնը՝ դաշտերում ծաղկող ծաղիկ-
ների նման, ձեռք է բերուած մեր արիւնով...:

* * *

Վարձեալ ձեր պատճառաբանութիւններին
կպատասխանեմ:

— Զեր մտքերը ծածկվումեն առակների և
օրամիտ ասացուածների մէջ, որոնց մէջ չկայ
ամենեւին զիտութեան ոգի, այլ միայն արտա-
քին փայլ: Վա նմանումէ այն տկին, որի մէջ
կարելի է լեցնել թէ՛ լաւ և թէ՛ վատ զինի-
բայց տկով չէ կարելի ճանաչել թէ՛ ո՞ր զինին
է լաւը և որը՝ վատը: զինին ճանաչվումէ գոր-
ծածութեան մէջ: Նոյնպէս և ճշմարտութիւ-
նը չէ՛ իմացվում և հաստատվում օրինակով,
այլ փորձով, որը ճշմարտութեան փորձաքարն
է...: Զեռքի ոյժը չարութիւն չէ և ո՛չ էլ բա-
րութիւն, այլ ոյժ, իսկ չարութիւնն և բա-
րութիւնը նրա գործադրութեան մէջ է կայա-
նում:

Զեռքի ոյժը չարութիւն է, երբ որ բարձ-

րացնումես թոյլն կողոպտելու և անպատուե-
լու համար, բայց երբ որ բարձրացնումես եղ-
բօրդ պաշտպանելու և օգնելու համար, այն
ժամանակ բարութիւն է:

Նւ և եթէ դուք կարծումէք թէ՛ այդ առակ-
ների և ասացուածների միտքը յայտնող հրեշ-
տակը, ծառայումէ միայն ձեր ճշմարտութեան,
այն ժամանակ դուք սխալվումէք դրա մէջ, ինչ-
պէս և ուրիշ շատ բաների մէջ: Սրակը չեն
հանգցնում կրակով և ջրի վերայ լեցնում
ջուր: այդ ճշմարիտ է. բայց քարը փշրումեն
քարով, պողպատը ծեծումեն միայն պողպա-
տով, իսկ ոյժը— ուժով...: Ահա՛ իմ ասացուա-
ծը...: Իմացէ՛ք, որ առակի հրեշտակը միայն
ձեզ չէ՛ որ յայտնումէ նրանց վաղտնիքը: Նս
նոյնպէս խօսակցել եմ նրա հետ. ահա լսեցէ՛ք
թէ ինչ պատմեց նա ինձ իմ ուսումը բացառ-
ելու և ընդգիմադրութեան սուրբ լինելու
մասին...:

* * *

Նւ և բարբի Մենաքէմը իւր աշակերտներին

և իւր մօտ եկած Նասէացիներին հետեւեալ առաջը պատմեց.

Մի անգամ Աստուած խղճաց երկրին, որը լեքն էր չարութիւններով և թշուառութիւններով, ու ասաց. «ես կողարկեմ երկիր իմ սիրելի հրեշտակին, որին դեռ աշխարհ չէ տեսել»...: Եւ նա կանչեց անմեղ հրեշտակին, որին անունն էր «անգէտ չարի»: Նրկնաբնակ հրեշտակի դէմքի վերայ այնպիսի խորին պայծառութիւն, այնպիսի խաղաղութիւն և համեստութեան անմեղութիւն էր փայլում, որ ամեն անգամ, երբ Աստուծոյ հայեացքն երկար ժամանակ դարձած էր լինում դէպի մեղաւոր աշխարհը, մռայլումէր, այն ժամանակ նա նայումէր իւր սիրելի երեսին, նրա կապոյտ ու փայլուն աչքերին ու զուարթանում...:

Հրեշտակը կանգնեց Աստուծոյ առաջ իւր ձիւնի նման սպիտակ շորերում ու ուղղեց նրա վերայ իւր հայեացքը, որի վերայ փայլումէր պատանեկական անդիտակցութիւն...: Եւ Աստուած ասաց իւր հրեշտակին. «թո՛ւր, ահա՛ այնտեղ, աշխարհ, թող մարդիկ տեսնեն

քո պայծառութիւնը և ամաչեն իրանց մռայլ բարքից: Ամաչեն ու կթողնեն: Քո անմեղութիւնն այնքան շատ է, որ նրանք՝ տեսնելով քեզ, կմոռանան իրանց չարութիւնը»: Հրեշտակը ժպտաց ու հանգաւ թռաւ դէպի երկիրը: Եւ ասելով տեսան նրան, և ով որ նայեց նրա պայծառ աչքերին, նա զուարթացաւ...:

Թշուառ մոռանումէր իւր թշուառութիւնը, իսկ չարը մոռանում իւր չարութիւնը, ու հրեշտակի շուրջը չքանումէր չարիքը. իսկ նա թռչումէր մի տեղից ուրիշ տեղ, և առաջուայ նման պայծառ էին նրա աչքերը, որովհետեւ նա չգիտէր թէ ինչ բան է չարութիւնը: Մի անգամ նա թռաւ երկրի վրայով և անտառում տեսաւ մի մարդ: Մարդը՝ ականջ դնելով անտառի շէնքին գնումէր շաւիղով ու յետ նայում, որովհետեւ թշնամիները նրա յետեւից ընկած հալածումէին: Բայց հրեշտակը չէր հասկանում թէ ինչու մարդիկ հալածում են նրան, ուստի կամենումէր իջնել այն մարդու մօտ, կանգնել նրա առաջ անտառի մթուածի մէջ ու իւր պայծառութեամբ և հա-

մեստութեան անմեղութիւնով լուսաւորել նրա ճանապարհը...:

Բայց այդ ժամանակ այն մարդը մօտեցաւ մի այլ մարդու բնակարանին, որը նստել էր դրան շէմքում, և փախստականը՝ թուլացած ընկնելով, ասաց.

— Ես այլ ևս չեմ կարող առաջ գնալ, հոգնած եմ, կհասնեն ինձ ու կսպանեն. հովանաւորի՛ր ու պաշտպանի՛ր ինձ քո բնակարանում: Եյն ժամանակ այն մարդը պատասխանեց.

— Ես գիտեմ ո՛վ է հալածում, նրանց հայրերն ու պապերը միշտ հալածումէին անմեղներին, իսկ իմ հայրերս ու պապերս հիւրընկալումէին թոյլերին և հալածեալներին...: Ես ևս քեզ կհիւրընկալեմ: Մտի՛ր տունս և հանգրստացիր...: Բայց առաջ թող բաց անեմ քո շղթան, ինչպէս հայրերս ու պապերս էին անում և որը կտակեցին ինձ: Եւ նա կտարեց շղթան ու ուժով ձգեց մի կողմը, ասելով. թող հայրերիս և պապերիս տունը չաղծուի ստորկութեան շղթաներով: Հալածուած մարդը մտաւ տուն և քնեց. իսկ հրեշտակն այս բո-

լորը լսեց ու տեսաւ, բայց ոչինչ չհասկացաւ, որովհետեւ նրա անունն Անդէտ էր: Հրեշտակը թեքուեցաւ դէպի յոգնած մարդը և ժպիտը խաղաց քնածի դէմքին և նրա հոգին դարձաւ պարզ ու քունն անոյշ: Յետոյ հրեշտակը մօտեցաւ շէմքում նստած տանտիրոջ, բայց տանտէրը հրեշտակին չտեսաւ, որովհետեւ նրա հայեացքն ուղղուած էր դէպի անտառը: Ես հսկումէի իւր հիւրի քունը: Եյն ժամանակ հրեշտակը թռաւ աւելի հեռու: Եւ մօտիկ տեղում պատահեցաւ յոգնած և զայրացած մարդկանց: Քրտինքից ու չարութիւնից փայլումէին նրանց աչքերը և նրանք չէին հասկանում, որ իրանց առաջ հրեշտակ է կանգնած, այլ միայն հարցրեցին.

— Չտեսա՞ւ արդեօք նա շղթայակապ մարդուն:

Հրեշտակը խղճաց յոգնած մարդկանց և ձեռքը մեկնելով դէպի այն տունը, որտեղ տեսել էր շղթայակապ մարդուն, ասաց.

— Եկէ՛ք յետեւիցս, նա այնտեղ է:

Եւ ինքն առաջ ընկնելով, տարաւ նրանց

այն տունը, փախստականը ժպտը երեսին նըն-
ջումէր, որովհետեւ նրա հոգին պարզ էր: Մի-
այն տանտէրը լսեց այն մարդկանց քայլերի
ձայնը և տեսնելով եկողներին, շուտով նա վեր
թռաւ և մտաւ տուն:

Նղբայրս, դու բաւական հանգստացար, այժմ
դուրս եկ անիցս, և շտապիւր փախչիլ աւելի
հեռու, որովհետեւ քեզ հալածողները մօտե-
նումեն այստեղ...» Իսկ այն մարդը վախեցաւ
ու ասաց.

—Նրանք կսպանեն ինձ անտառում: Ես քը-
նեցի տանդ, այդ պատճառով չպիտի կարողա-
նամ փախչել...: Մայ ինձ, կորայ ...

Իսկ տանտէրը պատասխանեց.

—Դուրս եկ շուտով, ես նրանց այստեղ կը
զբողեցնեմ: Հայրերս ու պապերս կտակել են
ինձ պաշտպանել հիւրի քունը, և մինչև այժմ
ոչ ոք չէ վնասուած իմ տանս քնելուց:

Փախստականը հաւատաց և փախաւ ան-
տառ. իսկ տանտէրը, վերցրեց զէնքը ու կանդ-
նեց դրան շէմքում: Հալածող մարդիկ, մօտե-
նալով, տեսան տան տիրոջ ու ասացին

—Ի՞նչ տանը կայ մի մարդ, որին փնտռում
ենք սպանելու համար: Մե՛զ յանձնիր նրան:

Իսկ տանտէրը պատասխանեց.

—Ձեր հայրերն ու պապերը միշտ հալածում
էին անմեղներին. իսկ իմ հայրերս ու պապերս
կտակեցին ինձ պաշտպանել հիւրի քունը: Այն
ժամանակ նրանք մերկացրին սրերը. իսկ հրեշ-
տակը կանգնած էր և ոչինչ չէր հասկանում,
որովհետեւ նրա անունն Անգէտ էր: Սկսուեցաւ
կռիւը. սուրը սրին էր դիպչում և բարձր շը-
ռրնչում ու վտանգ սպառնում այն մարդու
կեանքին, որը պաշտպանումէր հալածական
հիւրի կեանքը...: Հրեշտակը լսումէր, բայց ո-
չինչ չէր հասկանում: Նւ երկար ժամանակ շա-
ռաչում և շոնչումէին սրերը միմեանց դիպչե-
լով, մինչև որ թշնամու սուրը խրուեցաւ տան-
տիրոջ կուրծքը: Նւ նա արիւնաթաթաւ բն-
կաւ դրան շէմքի վերայ...: Արիւնը՝ ցայտելով
վերքից, ընկաւ հրեշտակի ձիւնի նման սպի-
տակ շորերի վերայ և իբրեւ կարմիր արատ մը-
նաց նրա վերայ: Իսկ հրեշտակի լսելիքը խլա-

ցաւ այն մարդու մահուն հառաչքով, որին՝
իւր անգիտակցութեամբ, նա կորցրեց ...

Հալածողները մտան տուն և ոչ ոք չգր-
տան: Պօւրս դալով այնտեղից, ասացին տան-
տիրոջը:

— Ահա դու խաբեցիր մեզ, ծածկելով ճրշ-
մարտութիւնը, այդ պատճառով այժմ ինքդ
ես մեռնում: Իսկ տանտէրը պատասխանեց:

— Ես ծածկեցի ձեզից ճշմարտութիւնը,
բայց խիղճն հանգիստ է Աստուծոյ առաջ, ո-
րովհետեւ ես մեռնումեմ, ինչպէս հայրերս ու
պապերս, թոյլին պաշտպանելու համար: Եւ
իմ արիւնը կտակումեմ իմ և ձեր որդւոց:

Այս խօսքերից յետոյ աւանդեց նա իւր հո-
գին. իսկ հրեշտակը՝ լսելով այս բոլոր խօսքե-
րը, չհասկացաւ նրանց միտքը, որովհետեւ նրա
անունն Անդէտ էր:

Բայց հրեշտակի հայեացքը կարմիր արեան
վերայ ընկնելուն պէս, արտափայլը ցոլաց նրա
աչքերի և նրանք կորցրին իրանց առաջուայ
պայծառութիւնը...:

Նա՝ արտայայտելով զանգատ ու երկիւղ,

ուղղեց իւր աչքերը դէպի այն մարդիկ, իսկ
յետոյ, մահուն սարսափի մէջ, բարձրացաւ
Աստուծոյ աթոռի մօտ և կանգնեց նրա առաջ:
Աստուած նայեց նրա աչքերի և շորերի վերայ:
Հրեշտակը կանգնած էր նրա առաջ, իսկ նրա
աչքերի մէջ չկային այլ ևս առաջուայ պայծա-
ռութիւնը, այլ վրդովութիւն, վեշտ և ամօթ,
որովհետեւ նա արիւնաթաթաւ էր: Հրեշտակի
աչքերը պղտոր էին, որովհետեւ նրանց մէջ չէր
փայլում ոչ առաջուայ սուրբ և ոչ էլ վշտի
գիտակցութիւնը...: Եւ Աստուած վշտացաւ,
իսկ հրեշտակը զայրացած ասաց:

— Ո՛հ, Եհովայ, Եհովայ...: Ահա իւր ու-
ղարկեցիր քո հրեշտակին... ահա մարդիկ ի՞նչ
արեցին ինձ... այժմ սիրտս քարացել է...:

Աստուած՝ նայելով հրեշտակի վերայ, լաց
եղաւ:

— Ո՛հ մարդիկ, մարդիկ, ի՞նչ արեցիք սի-
րելու: Եհովայ պատահեցաւ այդ քեզ և ճրտեղ
կորցրեցիր քո առաջուայ պայծառութիւնը...:

Այն ժամանակ հրեշտակը սկսեց պատմել,
այն ինչ որ պատահել էր նրան:

—Անտառում տեսայ մի շղթայակապ մարդ, և մի այլ մարդ ևս՝ որ նստած էր խրճիթի շէմքում: Նրանք խօսումէին հալածանքի և պաշտպանութեան մասին, բայց ես ոչինչ չհասկացայ: Յետոյ յոգնած մարդը մտաւ տուն, իսկ ես թռայ աւելի հեռու...: Եւ կամենումէի կանգնել նրանց առաջ, բայց նրանք չտեսան ինձ, որովհետեւ զբաղուած էին մի ուրիշ բանով.:

—Հարկաւոր չէր նրանց քո տեսքը,—ասաց Աստուած: Առաջ պիտի հալածողների առաջ կանգնէիր և յետոյ հալածականի առաջ:

—Եւ չէի իմանում, ասաց Հրեշտակը:—Եւ մի փոքր հեռու պատահեցայ ուրիշ մարդկանց, որոնց աչքերը փայլումէին քրտինքից և չարութիւնից: Նրանք՝ ամենևին երեսիս չնայելով, հարցրին՝ թէ ո՞րտեղ է շղթայակապ մարդը: Եւ էլ ցոյց տուեցի նրանց այն խրճիթը...: Աստուած գլուխը կախ ձգեց ու ասաց.

—Ափսոս, շատ ափսոս...: Եւ այժմ տեսնումեմ որ անգիտակցութեան համար երկրի վերայ տեղ չկայ...:

Իսկ Հրեշտակը պատմեց բոլորը ու գոչեց.

—Պէ՛տ ուղարկեցիր ինձ երկիրը, ո՛չ թէ ես, այլ դու ես մեղաւոր այն բոլոր պատահարների մէջ...: Վերցնու՛ր սրտիս վերայից այն ծանրութիւնը, որը ճնշումէ սիրտս, և մաքրի՛ր շորերիս այս զգուելի կարմիր արատները...: Այնպէս արա՛, ո՞վ յաւիտենականդ, որ առաջ ուայ նման, չիմանամ ես ոչինչ, և որպէս զի հոգւոյս մէջ կրկին թագաւորէ անգիտակցութեան պայծառութիւնը...: Եւ Հրեշտակը՝ հեծեծելով, ընկաւ Աստուծոյ աթոռի առաջ: Բայց Աստուած պատասխանեց.

—Ինքդ ևս չգիտես թէ ինչ ես խնդրում: Եւ այդ չեմ անիլ, այլ կանեմ մի ուրիշ բան. փոխանակ անգիտակցութեան, ես կանուանեմ քեզ Վշտի գիտակցութիւն: Եւ Աստուած պատմեց Հրեշտակին, թէ ի՛նչ արիւն է թափուել նրա շորերի վերայ ու ասաց.

—Եւ քեզ պատուիրումեմ կրել այդ արիւնը, ինչպէս սրբութիւն: Պա սուրբ արիւն է, որը թափուած է թոյլին պաշտպանելու համար: Եւ տեսնելով այդ,—դու պիտի ցաւիս: Իսկ անգիտակցութիւնը չէ վերադառնալու քեզ...:

Մինչև անգամ ես էլ չեմ կարող փոխել այն՝
ինչ որ կատարուել է անցեալում: Միթէ դու
ցանկանումես, որ առաջիկայում ես մնայ այն
բոլորը, ինչ որ եղել է անցեալում: Իսկ քո սըր-
տում միշտ փայլէ ուրախութիւն...:

— Ո՛չ ամենակարող...: Չեմ ցանկանում,
չէ՛...: Թողի՛ր ինձ յաւիտեան իմ վիշտը:

Եւ Աստուած բարձրացրեց հրեշտակին ու
ասաց.

— Գու առաջուայ նման իմ սիրելին կլինես,
և իմ սէրը դէպի քեզ կկրկնապատկուի...: Բայց
այսօրուանից քո անունը չի լինիլ անգիտակ-
ցութիւն...: Այտուհետե քո անունն է Մեծ
Վիշտ...:

Հրեշտակը բարձրացաւ և աչքերն ուղղեց
Աստուծուն, և Աստուած դարձեալ սիրով նա-
յեց նրա աչքերին և տեսաւ նրանց մէջ...վիշտ:

Հրեշտակն ասաց. — Տէ՛ր, այժմ թո՛ղ տուր
ինձ դարձեալ գնալ երկիր...: Ես այն նահա-
տակի սուրբ արիւնը կտանեմ նրա և նրան
սպանողների որդւոց...: Եւ թո՛ղ երբոր որ նը-
րանք մեծանան, նրանց աչքերի պայծառու-

թիւնը փոխուէ վշտի գիտակցութեան...: Եյն
ժամանակ առաջին անգամ իրանք կլինեն թոյ-
լերի պաշտպանը, և կկատարեն իրանց հայրերի
կտակը մինչև այն օրը, երբ հալածողների որդիքը
կհասկանան այն բոլոր վշտերը, որոնք ծագում
են բռնաւորների կտակից ...:

Եւ հրեշտակը՝ խոնարհելով Աստուծոյ ա-
թոռի առաջ, բարձրացաւ և հանդարտ շար-
ժելով իւր թևերը, թռաւ դէպի երկիրը. իսկ
Աստուած՝ վշտի այգալիսի թռիչքի յետևից
սիրով նայումէր. :

Մինչդեռ Մենաքէմ Գամաղաջին պատ-
մումէր այս առակը, երեկոն հագաւ իւր սև
քողը: Երկիրը խորասուզուեցաւ խաւարի մէջ,
իսկ երկնքի վերայ վառուեցան Աստուծոյ զամ-
բարները, և հրեղէն սուրը՝ դարձեալ փայլեց
երկնքում, դարձած դէպի Հրէաստանը: Ամեն-
քի սրտերը խաղաղացան և հանգստացան, իսկ
նրանց հոգիները տրտնջումէին Աստուծոյ նը-
շանի վերայ: Եւ ամենքը՝ լռած ականջ էին
դնում գիշերուայ խաղաղութեան: Մարդկանց
թուումէր թէ լսումն, անսաՀման տարածու-

Թեան մէջ, այն աստղն զարհուրելի Թռիչքը,—
այն աստղի, որը վիպ էր անարգ դէպքերի:
Իսկ Մենաքէմ Գամաղացին կանգնեց իւր
տան սանդուղների վերայ, կարկառեց ձեռքերը
դէպի կապոյտ երկինքը, և ամբողջ մարմնով
լուսաւորուած երկնային լուսատուների բո-
ցային լուսով, աղօթք էր ուղղում առ Աստ-
ուած.

—Ո՛հ, Եհովայ, Եհովայ...:

Գուռ նշաններ ես ուղարկում երկիր, բայց
չես մեկնում նրանց միտքը: Այս երկրում, դէպի
որն այժմ դարձած է քո բարկութեան սուրբ,—
այժմ զոյուծիւն ունեն հալածողներ և հա-
լածուողներ...: Արդեօք առաջի՞ն, թէ՛ երկրորդ
նշանով ես սպառնում...: Թող քո կամքը լինի,
բարձրեալդ, բայց քեզ եմ ուղղում իմ ջերմ
աղօթքը: Բնդունի՛ր աղօթքս, դու՛ Տէր, ի-
մաստուն աչքով յաւիտենական ժամանակը,
տեսողդ: Որովհետեւ, դու ես իմ յոյսերի կա-
տարողը, դու ես անյայտ բաները տեսողը,
դու ես խաղաղութիւնը...: Եւ եթէ դու, ան-
սահման իմաստութեամբդ, դատեցիր ժամա-

նակի կորուստը յօգուտ ճշմարտութեան, կրկին
օգնի՛ր զիմադրելու բռնութեան, և քո անար-
գուած սեղանների փոխանակ նորից կանգնել
յաղթութեան սեղանը:

Թող կատարուի...:

Բայց կատարի՛ր թշուառներիս խնդիրքը,
լսի՛ր մեր աղաչանքը, ամենաբարձրեալդ: Թող
չմոռանանք երբէ՛ք, քանի կենդանի ենք, ճշ-
մարտութեան համար պատերազմելու կտակը:
Թող երբէ՛ք չասենք, առաւել լաւ է մենք
փրկուենք, անօգնական թողնելով թոյլերին: Թող
մեր ոչ մի հարուածն ուղղուած չլինի անմեղ-
ների դէմ: Թող երբէ՛ք չանարգենք սւրիշի
սուրբ սեղանը, յիշելով մերը: Թող մեր մտ-
քերը պահեն իրանց փայլը, որպէս զի մեր
քայլերը կարողանանք ուղղել դէպի արդարու-
թեան ճանապարհը. իսկ մեր ձեռքերի հար-
ուածները—պաշտպանութեան, այլ ոչ թէ հա-
լածանքի: Եւ երբոր մահուան քնով փակուին
մեր աչքերը,—այն ժամանակ, ո՞վ Տէր, մի թոյլ
տուր, որ անխառնութիւնը թաղաւորէ երկրի
վերայ: Որպէս զի մենք հասկանանք, որ ճշ-

մարտութեան օրէնքը սուտ չէ, ինչպէս սուտ չէ բնութեան օրէնքը. ահա այժմ, թէև սարսափելի նշանը բոցավառվումէ կապոյտ երկնքի վերայ, բայց, գիտեմ, Տէ՛ր, որ նա կանցնէ և կանցայտանայ: Իսկ Համեստ լուսինը, որը այժմ սակաւ է նշմարելի, — պիտի ծագէ երկրի վերայ իւր ժամանակին դարէ ցդար:

Իսկ երբ քո կամքի վայրկեանը Հասնի և մենք սպանուենք, այն ժամանակ, թող վշտի հրեշտակը հովանաւորէ՝ մեր գերեզմաններն իւր թևերով, և պատմէ՝ մեր մահը մեր և մեր թշնամեաց որդւոց, որպէս զի մեր մահը ծառայէ ճշմարտութեան:

Եւ ես հաւատումեմ, թէ Տէր, որ երկրի վերայ կտիրէ քո թագաւորութիւնը...: Սանյայտանայ բռնութիւնը. ազգերը կտօնեն իրանց եղբայրութիւնը, և այլ ևս երբէ՛ք մարդու ձեռքով արիւն չի թափուի:

Եյն ժամանակ վշտի հրեշտակը, ուրախ շարժելով իւր թևերը կբարձրանայ երկինք. իսկ երկրի վերայ կլինի ուրախութիւն և խաղաղութիւն:

Թող այն ժամանակ մարդիկ յիշեն մեզ, դժբախտներիս, ոչ թէ Հալածանքի, այլ Հայրենիքի աղատութեան Համար արիւն թափողներիս:

Եւ նա գնաց :



4764-4769

2013

